



ՀԱՎԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6



NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE
OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY
HAIA-6

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА
АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
ХАИА-6

YEREVAN
IAE PUBLICATION 2024
ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2024

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԽԱ - 6

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
6

ԵՐԵՒԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2024

*Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ*

*Published by decision of the Scientific Council
of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA*

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ Արսեն Բոբոկյան

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Տորք Դալալյան

Խմբագրակազմ՝ Լևոն Աբրահամյան, Պավել Ավերիսյան,
Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան,
Ջուսյո Թրախնա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատրյան, Ռուբեն Կարապետյան,
Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան,
Դիանա Միրիջանյան, Ադամ Սմիթ, Պատրիկ Տոնապետեան, Պիյեր Բատի

Editorial Board

Editor-in-Chief: Arsen Bobokhyan

Vice-Editor-in-Chief: Tork Dalalyan

Editorial Stuff: Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Diana Mirijanyan, Adam Smith, Giusto Traina

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 6-րդ հատորն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, Սիրակուզայի համալսարանի (ԱՄՆ) հետազոտողների հոդվածները, որոնց նախնական տարբերակները որպես զեկուցում ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 2023 թ. հոկտեմբերի 18-19-ին ՀԱԻ Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի կազմակերպած «Համաշխարհայնացումը և սոցիալ-մշակութային արդի գործընթացները Հայաստանում. հիմնախնդիրներ և հեռանկարներ» գիտաժողովին: Հատորը եզրափակվում է մեկ հաղորդմամբ և Բեյրութում հրատարակվող Հայկազեան հայագիտական հանդեսի երկու համարների գրախոսությամբ:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ ԵՒ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

7

Միհրան Գալստյան

Մնալ, թե՛ գնալ. Հայաստանից հնարավոր նոր արտագաղթի սոցիալ-մշակութային հիմնախնդրի շուրջ

8

Լուսինե Տանաջյան

Հայ և այլազգի ներգաղթյալների ինտեգրումը Հայաստանում. համեմատական կողմեր

24

Սոնա Ներսիսյան

Հայաստանը ռուսաստանցի ներգաղթյալների ընկալումներում

37

Սյուզաննա Բաբսեղյան

Հայաստանի հայրենադարձության քաղաքականության հիմնահարցերն արդի իրողությունների համատեքստում

49

II. ՆԵՐԳԱՐԹՅԱԼՆԵՐ ԵՒ ՏԵՂԱՅԱՆՎԱԾՆԵՐ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏԸ

65

Գայանե Հակոբյան

«Հալեալի շուկան»՝ որպես սիրիահայերի ձեռնարկատիրական գործունեության միկրոմոդել

66

Գարիկ Աթանեսյան

Առտնետիկության խոսույթը և բեմադրված ժառանգությունը հետխորհրդային Հայաստանի զբոսաշրջային պրակտիկաներում

78

Արմինե Տիգրանյան

Ադրբեջանի կողմից բռնի տեղահանված արցախահայերի մշակութային կյանքին մասնակցության սահմանափակումները (Արցախի Հաղթութի շրջանի օրինակով)

89

III. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ

113

Ռուբեն Օհանջանյան

Պրոֆեսիոնալ մշակութային արժեքների փոփոխման որոշ հարցեր ՀՀ-ում գլոբալիզացիայի համատեքստում

114

Լուսինե Անգելուշ

Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունն արդի շրջանում

124

Մակիչ Վարդանյան

Գլոբալացման խոսույթը հայաստանյան զլմ-ներում. կրթության հիմնախնդրի համատեքստը

139

IV. ԱՎԱՆԴԱԿԱՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԸ	
ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐՈՒՄ	157
<i>Սվերլյանա Պողոսյան</i>	
Հագուստը որպես խորհրդահայ և ետխորհրդահայ հասարակության սոցիալ-հոգեբանական ցուցիչ	158
<i>Հասմիկ Աբրահամյան</i>	
<i>Ռոման Հովսեփյան</i>	
Ուտեստի էթնոմշակութային դերը միգրացիայի շրջապատւոյտում (նախնական հետազոտություն՝ ըստ Սյունիքից գրառված նյութերի)	174
V. ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ	189
<i>Ռուբեն Կարապետյան</i>	
Սփյուռքի համայնքային կառույցներում հայերի ներգրավվածության խնդիրը	190
<i>Նարե Գալստյան</i>	
Հայրենիքի մասին պատկերացումները Լոս-Անջելեսի հայկական համայնքում	204
<i>Նելլի Խաչատրյան</i>	
<i>Սալվինե Մարկոսյան</i>	
<i>Մարիամ Հարությունյան</i>	
Էթնոկրոնական վերափոխարկումը համաշխարհայնացման համատեքստում (հնդկական, թուրքական և իռլանդական սփյուռքների փորձի հիման վրա)	218
VI. ՀԱՂՈՐԴՈՒՄ	237
<i>Հռիփսիմե Ասատրյան</i>	
Մանկական բանահյուսության որոշ արդի դրսևորումներ	238
VII. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ	247
Հայկազեան հայագիտական հանդեսի 2022 տարւոան զոյգ գիրքերը	248
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ	263

I

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ ԵՒ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Սոնա Ներսիսյան, պ.գ.թ.
ՀԱԻ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՑԻ ՆԵՐԳԱՂԹՅԱԼՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ

ՀՀ-ում ներգաղթի ու ներգաղթյալների վերաբերյալ ուսումնասիրությունները մեծ մասամբ շեշտադրում են Հայաստանի՝ որպես ընդունող պետության դերն ու դրանից բխող հարցերը: Այսպիսի մոտեցումն արտացոլում է խնդրի առանձին կողմերը՝ դարձնելով այն սահմանափակ: Օրինակ՝ ՀՀ-ում ներգաղթյալներին ուղղված թիրախային քաղաքականության կիրարկման հնարավորությունը մշտապես իրացվել է իրադարձային հոսքերի միջոցով, որոնց գերակշիռ մեծամասնությունը հայեր են եղել: 2022-2023 թթ. Ռուսաստանի քաղաքացիների մեծածավալ ներգաղթը Հայաստան շեշտադրեց այլազգի ներգաղթյալների վերաբերյալ ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Այս աշխատանքում փորձ է կատարվել առաջ բերելու ներգաղթյալների տեսանկյունից՝ Ռուսաստանից Հայաստան ներգաղթի գործընթացում՝ քննարկելով նրանց ընկալումների առանձնահատկությունները:

Հիմնաբաներ՝ ներգաղթյալների ընկալումներ, ռուսաստանցի ներգաղթյալներ, հարմարում, համարկում, ռազմական մոբիլիզացիա:

Ներածություն

Վերջին երկու տարիներին ՀՀ-ում նկատվել է Ռուսաստանից Հայաստան ներգաղթի մեծ հոսք, որն արտացոլված է նաև վիճակագրական տվյալներում [աղ. 1]: 2022 թ. և 2023 թ., թե՛ ցամաքային և թե՛ օդային սահմանափակումների տվյալներով, ՌԴ-ից Հայաստան շարժն անցել է մեկ միլիոնը, ինչն աննախադեպ է Հայաստանի համար:

Հատկանշական է, որ ՀՀ քաղաքացիություն ստանալու համար դիմողների մեծ մասը ազգությամբ հայեր են: 2022 թ. ՀՀ քաղաքացիություն է ստացել 20 հազար մարդ: Նրանց ճնշող մեծամասնությունը՝ ավելի քան 90 %-ը, քաղաքացիություն է ստացել ազգությամբ հայ լինելու հիմքով, նրանք Ռուսաստանի քաղաքացիներ են եղել: 2021 թ. այդ թիվը եղել է մոտ 7300¹: Այնուհանդերձ Հայաստանը գրավիչ երկիր է նաև ռուսաստանցի այլազգիների համար, որոնց ներգաղթի համար առաջնային են մի շարք «ձգող» գործոններ, ինչպիսիք են վիզային ռեժիմի բացակայությունը, ՌԴ քաղաքացիների համար լիբերալ միգրացիոն քաղաքականությունը, հանրային ընկալումները, ևն²:

Տեղափոխվածների ազգային կազմը հիմնականում ներառում էր ռուսներ, ուկրաինացիներ, բելառուսներ, հայեր ևն, որոնք Հայաստան էին եկել տարբեր նպատակներով՝ շատ դեպքերում փոխանցելով իրենց ֆինանսական ռեսուրսներն ու կապիտալը:

1 Դիլանյան 2023.

2 Melkumyan, Melkonyan 2023, 137.

Աղյուսակ 1.
Սահմանային մուտքերի և ելքերի գրանցումները՝
ըստ ՌԴ քաղաքացիության (2018-2023)

մուտք/ելք			մնացորդ
2018	մուտք	684 014	10.750
	ելք	673 264	
2019	մուտք	855 612	12.155
	ելք	843 457	
2020	մուտք	195 385	-17.608
	ելք	212 993	
2021	մուտք	495,646	16.120
	ելք	479,526	
2022	մուտք (հունվար-նոյեմբեր)	1 016 223	48.527
	ելք (հունվար-նոյեմբեր)	967 696	
2023	մուտք (հունվար-օգոստոս)	1 172 381	8.246
	ելք (հունվար-օգոստոս)	1 164 135	

աղբյուր՝ Սահմանային էլեկտրոնային
կառավարման տեղեկարկական համակարգ:

Ներգաղթյալները Հայաստան հասնելու երեք հիմնական ճանապարհ են օգտագործել՝ ա) ուղղակիորեն Ռուսաստանից Հայաստան, բ) Ռուսաստանից այլ երկրներ՝ Ղազախստան, Վրաստան, Թուրքիա և հետո՝ Հայաստան, գ) Ռուսաստանից Հայաստան, հետո՝ Հայաստանից այլ երկիր, ապա վերադարձ Հայաստան:

Վերլուծելով տվյալները՝ կարող ենք ասել, որ Հայաստանը ռուսաստանցիների համար հիմնականում դիտարկվում է որպես տարանցիկ երկիր:

Ռուսաստանից Հայաստան տեղափոխված ներգաղթյալներին կարելի է խմբավորել երեք հիմնական ժամանակային փուլերի և հոսքերի՝ 2022 թ. փետրվարի 24, 2022 թ. սեպտեմբերի 21 և 2023 թ. փետրվար-մարտ: Այդ փուլերի միջև ժամանակահատվածում շարունակել են շարժվել դեպի Հայաստան նաև ավելի փոքր խմբեր: Նրանցից յուրաքանչյուրն ունի սոցիալ-մշակութային առանձնահատկություններ:

Իրավական տեսանկյունից դժվար է տարբերակել ռուսաստանցիների Հայաստան արտագաղթի պատճառը, քանի որ նրանք օգտվում են Հայաստանում 180 օր որպես զբոսաշրջիկ մնալու իրավունքից՝ չհստակեցնելով իրենց որոշման այլ պատճառ: Ի դեպ, այս հանգամանքը մեծ ազդեցություն է ունենում նրանց սոցիալ-հոգեբանական վիճակի վրա, քանի որ իրավական կարգավիճակի անորոշությունը հանգեցնում է նաև նրանց կյանքը կազմակերպելու, պլանավորելու անորոշության:

Ռուսաստանցի ներգաղթյալները հիմնականում Երևանում են՝ ինչպես քաղաքի կենտրոնում, այնպես էլ՝ ծայրամասերում: Բացի Երևանից, մեծ հոսք է եղել դեպի Գյումրի, Վանաձոր, Դիլիջան: Հազվադեպ են օրինակները, երբ

ռուսաստանցի ներգաղթյալները բնակություն են հաստատել մարզային փոքր քաղաքներում կամ գյուղերում:

Մեթոդաբանություն

Հոդվածը հիմնված է «Այլազգի ներգաղթյալների սոցիալական ինտեգրման փորձառությունը Հայաստանում. իրավիճակ և զարգացումներ - 22YR-6A037» ծրագրի շրջանակում իրականացված հետազոտության արդյունքների վրա, որպես թիրախային ընտրվել է ներգաղթյալների միայն մեկ հատվածը՝ 2022 թ. մարտից մինչև 2023 թ. հուլիս ՀՀ տեղափոխված ռուսաստանցի ներգաղթյալների խումբը:

Հետազոտությունն անցկացվել է փաստաթղթերի վերլուծության և կիսաձևայնացված հարցազրույցի մեթոդի կիրառմամբ: Ընտրանքի ձևավորման ժամանակ կիրառվել է քվոտային մեթոդը: Մինևույն ժամանակ, պահպանվել է տեղեկատու անձանց ներառման ներկայացվածությունը՝ սեռատարիքային, ծննդյան և տեղաբաշխման բնակավայրի, զբաղվածության և այլ ցուցանիշներով:

Ուսումնասիրված խմբի բնութագրիչ չափանիշները որոշվել են նախնական հետազոտության և պիլոտային փուլի արդյունքով:

ԸՆԴԱՄԵՆԸ	20	
տարիք	>30/<30	17/3
սեռ	կին/տղամարդ	7/13
ազգություն	հայ/ռուս	3/17
հետազիծ	ուղիղ/հատել է մեկից ավել երկրի սահման	18/2
ծագման վայր	Մոսկվա (ծնված/տեղափոխված)	5/5
	Սանկտ-Պետերբուրգ (ծնված/տեղափոխված)	3/1
	շրջաններ	6
զբաղվածության ոլորտ	ձեռնարկատիրություն	2
	կրթություն	1
	SS	2
	հեռավար ձեռնարկատիրություն	1
	ուսանող	2
	ծառայություն	7
	սպասարկում	5

ՀՀ ընտրությունը՝ որպես ներգաղթի ուղղություն

Ռուսաստանի ներգաղթյալների մասին ընդհանուր պատկերացում կազմելու նպատակով քննարկենք նրանց տեղափոխության որոշ կարևոր հանգամանքներ:

Հայաստանը ներգաղթյալները հարմար երկիր են դիտարկում արագ տեղափոխության համար՝ մատնանշելով մի քանի կարևոր հանգամանքներ՝ իրավական, սոցիալական, տնտեսական և այլ տեսանկյուններից:

Այսպես, իրավական տեսանկյունից առավել գրավիչ է դիտարկվել այն հանգամանքը, որ Հայաստան տեղափոխվելիս՝ ռուսաստանցիները վիզա ստանալու կարիք չունենին, և նրանք նաև 180 օր ունենին երկրում մնալու համար:

Ֆինանսական տեսանկյունից էլ ռուսաստանցիները մեծ դժվարությունների չեն հանդիպել, քանի որ Հայաստանն իրավունք է տվել օգտվելու MIR ռուսական բանկային համակարգի քարտերից:

Տնտեսական առումով հատկապես նշվում էին ցածր գները (սակայն ոչ անշարժ գույքի) և հնարավորությունները՝ ՀՀ աշխատաշուկայում առանց մեծ խոչընդոտների տեղավորվելու հնարավորությունը, որոշ ոլորտների դեպքում՝ նույնիսկ իրենց աշխատատեղերը Հայաստան տեղափոխելու հնարավորությունն ու հարկային արտոնությունները:

Սոցիալական տեսանկյունից ամենահաճախ ընդգծվում էր Ռուսաստանի քաղաքացիների նկատմամբ հայերի հանդուրժողական և բարյացակամ վերաբերմունքի մասին, ինչպես նաև ռուսերենի իմացությունը լայն հանրության շրջանում: Սրանք այն հիմնական կարևոր գործոններն են, որոնք դեր են խաղացել երկրի ընտրության հարցում, այդ թվում՝ «եվրոպական եղանակը» և «օրգանական սնունդը», որոնց մասին բոլոր տեղեկատու անձինք անխտիր նշել են:

Այնուհանդերձ, թեև Հայաստանը նրանց համար դառնում է ավելի նախընտրելի ուղղություն, քան հնարավոր մյուս երկրները, այնուամենայնիվ, այն վերջնական նպատակակետի երկիր չէ:

Հայաստանում ռուսաստանցիների կողմից նշվող կրկնվող պատումները կապված էին Հայաստանում հարմարավետ բնակություն հաստատելու հետ, մինչև նրանք կարողանան երրորդ երկրում վիզա ստանալ: Այդ երկրները սովորաբար եվրոպական զարգացած երկրներն են կամ ԱՄՆ-ն, սակայն նշված երկրներ մուտքի արտոնագիր չստանալու պարագայում նրանք շարունակում են դիտարկել նաև Արևելյան Եվրոպայի կամ Լատինական Ամերիկայի երկրներ:

Սոցիալ-մշակութային միջավայր

Ռուսաստանի ներգաղթյալների ընկալումները բացահայտելու համար կարևոր է քննարկել ՀՀ սոցիալ-մշակութային միջավայրը, թե ինչ պատկեր է այն ունեցել մինչև ներգաղթը և ինչ առնչություններ է ունեցել «ռուսականության» հետ: Սա անհրաժեշտ է ընկալումները ձևավորող գործոնների երկրորդ կողմը հասկանալու համար:

Ցանկացած սոցիալական ներգործություն միջնորդավորվում է ընկալողի անձնական փորձով, ներաշխարհով, նրա նպատակներով, անձնային վերա-

բերմունքով: Սոցիալական ընկալման՝ նման մեկնաբանությունը, ըստ էության, պատասխան է տալիս այն հարցին, թե արդյո՞ք ընկալումն ակտիվ գործընթաց է, թե՛ այն պարզապես զգայարանների վրա ազդող, արտաքին ներգործությունների պասիվ, հայելային արտացոլում է: Ա. Բոդալյովի, Ե. Ամիրսովայի հետազոտությունները ցույց են տվել, որ սոցիալական ընկալումները առավելապես իրականացվում են խոսքի միջոցով և խոսքի շնորհիվ³:

Չնայած այն հանգամանքին, որ հայ հասարակության մեջ ռուսների հետ շփվելու խնդիր չկա, ռուսալեզու համայնքները գրեթե ամբողջությամբ կազմալուծվել են Հայաստանում: Այն սոցիալ-մշակութային ենթատեքստը, որը ետանկալի ժամանակաշրջանում սովորաբար թույլ էր տալիս դիրքավորվել (կամ գոնե նմանվել) սոցիալական կառուցվածքի ավելի բարձր շերտերում, նույնպես քայքայվել է: Մեր օրերում նման վարքագիծը ժամանակավրեպ է: Այնուամենայնիվ, ռուսերենը մնում է որպես օտարերկրացիների հետ շփման միակ լեզու՝ ավագ սերնդի ներկայացուցիչների համար, իսկ մնացածի համար՝ այլընտրանք անգլերենի կողքին:

Լեզվական մշակույթի քննարկումն առավել արդյունավետ կլինի, եթե համադրենք այն ՀՀ-ում օտարերկրացիների և մասնավորապես ռուսների ներկայության հետ:

Պաշտոնապես ՀՀ բնակչության միայն 0,4 տոկոսն է օտարերկրյա ազգությունների ներկայացուցիչ, այդ թվում՝ 8 ազգության (եզդի (1,1%), ասորի (0,09%), քուրդ (0,07%), ուկրաինացի (0,03%), հույն (0,02%), վրացի (0,02%), պարսիկ (0,01%), այլ (0,05%): ՀՀ մարդահամարի տվյալների համաձայն՝ Հայաստանում ռուսները կազմում են 11911 մարդ, որից միայն 1026-ն է ազատ տիրապետում ռուսերենին: Հասկանանք, թե ովքեր են կազմում այս խումբը և ինչպես են կազմակերպում իրենց կյանքը Հայաստանում, արդյո՞ք նրանք կարողանում են նշված փոքրաթիվ կազմով ապահովել կազմակերպված համայնքային ներկայություն:

Խոսելով Հայաստանում ռուսական համայնքի մասին՝ պետք է առաջին հերթին նկատի ունենալ էթնիկ ռուսների խմբին՝ մոլդկաններին⁴: Այդուհանդերձ, հարց է ծագում, թե Հայաստանում բնակվող ռուսների այս խմբին արդյո՞ք հնարավոր է համարել ռուսական համայնքի ամենակազմակերպված միավորը, քանի որ, ներառյալ մոլդկանները, գործ ունենք միայն ռուսական *դիսկրետ* խմբերի հետ: Նրանք չեն արտադրում կամ վերարտադրում ռուսական մշակույթ, որը կարող է կապված լինել ժամանակակից ռուսական մշակույթի հետ:

Այսպես, կարող ենք ասել, որ վերջին տարիներին անսխալաբար թվով ռուսաստանցիներ, Հայաստան տեղափոխվելով, հայտնվեցին «դատարկ այլէթնիկ» սոցիալական տարածությունում: Նրանք փորձում են այն լցնել հիմնականում սոցիալապես, մշակութային և քաղաքականապես չեզոք բովանդակությամբ՝ հաճախ խարսխելով մնացորդային խորհրդային սոցիալական

3 Бодалев 1983.

4 Մոլդկանները ռուսների էթնիկ խումբ են. նրանք մերժում են ուղղափառ եկեղեցին և ծեսերը, ունեն իրենց ավանդույթներն ու սովորույթները են: Հայաստանում մոլդկանները հիմնականում բնակվում են Լոռու մարզում, կոնկրետ՝ Տաշիր քաղաքում կամ ինչպես տեղացիներն են հիշում՝ Տաշիրում (Կալինին), իսկ ավելի վաղ՝ Վորոնցովկայում, Լերմոնտովոյի ֆիլիետովո գյուղում, ինչպես նաև Ճամբարակ քաղաքում:

մշակույթը: Այսկերպ նրանք փորձում են իրենց համար տեղ բացել հայկական սոցիալ-մշակութային դաշտում՝ ընդլայնելու իրենց գործունեության ոլորտը, զուգահեռաբար պատկանելություն գտնել՝ ուժեղացնելով ետգաղութային պատումների կենսունակությունը: Սակայն այս հարցում հայ հասարակության մեջ դեռևս չկա գերիշխող հանրային խոսույթ, որը կվերաբերի ոչ միայն ռուսաստանցի ներգաղթյալների ներկայությանը, այլև նրանց կողմից գններացվող սոցիալական մշակույթին: Մինչև այժմ Հայաստանում ռուսաստանցիների վարքը, հայտարարությունները կամ գործողությունները կապված են և ուղղված են ոչ թե մեր երկրում ռուսաստանցի ներգաղթյալներին, այլ ռուսական հասարակությանը: Ինչը նույնը չէ Հայաստանում մյուս այլէթնիկ խմբերի՝ իրանցիների կամ հնդիկների դեպքում:

Հայ հասարակության վերաբերմունքը ռուսաստանցի ներգաղթյալների նկատմամբ ավանդաբար դրական է եղել: Այս վերաբերմունքը փոխանցվել է նոր սերնդին՝ որպես խորհրդային տարիների ժառանգություն: Իսկ անկախության տարիներին դրական վերաբերմունքն առաջացել է հիմնականում վերից վար սկզբունքով: Հասկանալի է, որ այս դասավորության մեջ հանրային վերաբերմունքի ձևավորման վրա մեծ ազդեցություն ունի պետական շահերի և փոխգործակցության դերը: Դրա կողքին, սակայն, այն ձևավորվել է ՀՀ վերնախավի ռուսաստանյան գործարար շրջանակներին առնչակից խմբերի, ՌԴ-ում հայկական համայնքի ու ազդեցիկ անհատների միջոցով, որոնք Հայաստանում հասարակական տրամադրությունների ձևավորման առանցքային դերակատարներն են եղել: Ուստի նրանք հետևողականորեն առաջ են քաշել Հայաստանի և Ռուսաստանի հարաբերությունների համատեքստը՝ հայաստանցի և ռուսաստանցի ժողովուրդների հարաբերություններում: Սա եղել է հարաբերությունների հաստատման հիմնական միտումը վերջին 30 տարիների ընթացքում, քանի որ մինչև ռուսաստանցիների վերջին զանգվածային հոսքը Հայաստան՝ գործոնային լուրջ փոփոխություններ չեն եղել:

Այս վերջին հոսքը, մեծ հաշվով, հայաստանցի և ռուսաստանցի զանգվածային բնակչության (այսինքն՝ հասարակության տարբեր շերտերի խոշոր խմբերի) առաջին հանդիպումն էր:

Հասարակությունները միմյանց հետ շատ քիչ շփումներ ունեին և միմյանց ճանաչում էին միայն մի քանի առումներով: Ռուսների դեպքում՝ ՌԴ տարբեր քաղաքների (Մոսկվա, Մոսկվայի մարզ, Կրասնոդար, Դոնի Ռոստով, Սոչի ևն) հայաստանցի աշխատանքային միգրանտներն ու հայկական համայնքներն էին, որոնց միջոցով նրանք պատկերացում էին կազմում հայերի և ընդհանրապես Հայաստանի մասին:

Իսկ Հայաստանում, նախքան ռուսաստանցի ներգաղթյալների զանգվածային հոսքը Հայաստան, լայն հասարակությունը գրեթե կապ չուներ ռուսների հետ և ճանաչում էր նրանց որպես զբոսաշրջիկների կամ Հայաստանում ռուսական ենթակառուցվածքի ներկայացուցիչների կամ աշխատակիցների միջոցով:

Ռուսաստանցիների ներգաղթն իր ծավալով անսպասելի էր հայաստանյան բնակչության համար, այն ազդում է հասարակության վերաբերմունքի վրա: Այն մի կողմից դժգոհություն է առաջացնում, քանի որ հայ հասարակույթ-

յունը լայնածավալ «այլ մշակույթի» ուղղակի ներհոսքն ընդունելու սակավ փորձառություն ունի: Մյուս կողմից, ռուսաստանցի ներգաղթյալների մեծածավալ ներդրումները և/կամ ուղղակի կարճաժամկետ և միջնաժամկետ ծախսերի շրջանառությունը դրական ազդեցություն ունեցան Հայաստանի տնտեսության վրա, ինչն էլ դրական լույս սփռեց ռուսների ներկայության վրա:

Տնտեսական պատկերն ու գնահատականները տարբեր են տնտեսական գործունեության տարբեր առումներով, հետևաբար փոխվում է նաև վերաբերմունքը ռուսների նկատմամբ: Օրինակ՝ անշարժ գույքի գների արագ աճը դրական է ազդում հայերի վիճակի վրա, բայց առաջացնում է ռուսների բացասական վերաբերմունքը, իսկ ՏՏ ոլորտի զարգացումները դրական են ազդում երկուսի վերաբերմունքի վրա: Այնուամենայնիվ, տնտեսությունը բազմագործոն է և փոխկապակցված, և վերաբերմունքը գնահատելիս՝ հնարավոր չէ հաշվի առնել միայն մեկ ոլորտի վերլուծությունը: Հետևաբար, ավելի բազմազան և երկարաժամկետ վերաբերմունքի հետևանքները հասկանալու համար պետք է հաշվի առնել նաև արժույթային, սպառողական, ներդրումային և այլ ոլորտների փոփոխությունները:

Ռուսաստանցիների ընկալումները

Այսպես, տեղափոխության հետևանքով մի շարք հարցեր են ծագում թե՛ ներգաղթյալների և թե՛ ընդունող հասարակության շրջանում, սակայն այս գեկուցման շրջանակում կկենտրոնանանք ընդունող երկրի հասարակության վերաբերյալ ներգաղթյալների ընկալումների վրա:

Ուսումնասիրված խումբը կարելի է բնութագրել հետևյալ չափանիշներով.

Ըստ տեղափոխության պատճառի.

Հայաստանում կարող ենք առանձնացնել երկու հիմնական խումբ. նրանք, ովքեր հեռացել են ՌԴ-ից 2022 թ. փետրվարի 24-ին ռուս-ուկրաինական պատերազմի հայտարարումից հետո, 2022 թ. սեպտեմբերի 21-ին՝ ռազմական մոբիլիզացիայի հայտարարումից հետո, և 2023 թ. փետրվարից հետո տեղափոխվածները, այնուհետև նրանք, ովքեր բոլոր իրադարձություններից առաջ արդեն ՌԴ-ից դուրս են, սակայն չեն վերադարձել՝ ռազմական գործողություններին մասնակցելուց խուսափելով:

Ըստ գաղափարական հարցերի.

ՀՀ տեղափոխված անձանց մեջ առանձնանում են խմբեր, որոնք գաղափարապես դեմ են պատերազմին, և, ըստ էության, դա է եղել հիմնական պատճառը, որ խուսափում են մոբիլիզացիայից: Սակայն կան նաև խմբեր, որոնք խուսափել են մոբիլիզացիայից, սակայն կողմ են ՌԴ ռազմական քաղաքականությանը:

Մյուս երկու խմբերն ունեն փոքր-ինչ տարբերվող դիրքորոշումներ: Այսպես, երրորդ խումբը ձևավորվել է հիմնականում այն անձանցից, ովքեր «անուղղակի» խուսափում են մոբիլիզացիայից, պատճառաբանելով, որ մոբիլիզացվող անձը իր ընտանիքի անդամներն են կամ մերձավորները, որոնց բացակայությունը կարող է հանգեցնել ընդհանուր սոցիալական վիճակի լուրջ փոփոխությունների: Եվ վերջին խմբում անձինք են, ըստ որոնց՝ իրենք պատրաստ

չեն մարտական գործողությունների թե՛ հոգեբանորեն, թե՛ բարոյապես և թե՛ ֆիզիկապես. հետևաբար, իրենց մասնակցությունը պատերազմին ավելի շատ վստահ կպատճառե, քան օգուտ:

Այստեղ կարևոր է առանձնացնել մեկ խումբ ևս, որը նշում է մոբիլիզացիայից խուսափելու փաստերը, այդ պատճառով պայմանավորված մի շարք հանգամանքներ և մոտիվացիոն համընկնումներ, սակայն մշտապես հակասում է ինքն իրեն կամ ժխտում իր որոշման ու հետագա գործողությունների որևէ տեսակի կապը մոբիլիզացիայի հետ: Այս հակասական ու «միջանկյալ» դիրքորոշումը «հարմար» է հիմնականում հայրենադարձ-ներգաղթյալների համար:

Ըստ տեղափոխման վայրի.

Մոսկվայից, Սանկտ-Պետերբուրգից և շրջաններից տեղափոխված անձանց մոտեցումների ու գնահատականների մեջ կարելի է որոշակի օրինաչափ առանձնահատկություններ տեսնել: Խոշոր քաղաքներից տեղափոխության դեպքերում որոշումները հստակ են՝ հաճախ նույնիսկ կանխատեսելով մոբիլիզացիոն սցենար, իսկ շրջանների բնակիչներն ավելի շուտ հետևել են գործընթացներին: Խիստ տարբեր են նրանց անցած ուղիները, ինչպես նաև տեղափոխման երկրի՝ Հայաստանի վերաբերյալ նախնական պատկերացումներն ու սպասումները: Մոսկվայից, Սանկտ-Պետերբուրգից տեղափոխվածները նշում են ավելի խոշոր հեռանկարների մասին, որտեղ Հայաստանը դիտարկվում է որպես տարանցիկ կետ, իսկ դրա միջավայրը՝ արվարձանային (նկատի ունեն «կայսրության» արվարձան) բնույթի: Իսկ շրջաններից տեղափոխված անձինք իրենց վիճակը բնութագրում են որպես անելանելի, ըստ այդմ էլ Հայաստանը դարձել է «արագահաս փրկություն», իսկ միջավայրը՝ շատ մոտ մշակութային առումով:

Հետազոտության արդյունքներն ուշագրավ են մի քանի կողմերով. նախ, որ Հայաստանի վերաբերյալ տեղեկատու անձինք կան պատկերացում չեն ունեցել, կան ունեցել են աղճատված պատկերացում՝ միջնորդավորված տեղեկատվության միջոցով, օրինակ՝ ՌԴ-ում ժամանակավոր աշխատանքի մեկնած հայաստանցիների կամ հայկական համայնքի ներկայացուցիչների միջոցով: Սակայն հետաքրքիր է դիտարկել նրանց ընկալումները սեփական փորձից հետո: Նրանց իրական ընկալումները տեղավորվում են մի քանի պատմությունների մեջ.

- Հայաստանը որպես *դեժավյու*
- “Майр Хайастан”
- Հայաստանը որպես «պահեստային հայրենիք»⁵:

Հայաստանը որպես դեժավյու

Այստեղ տեղեկատու անձինք պնդում էին, թե Հայաստանը կարծես իրենց ռուսաստանյան սոցիալ-մշակութային միջավայրը լինի 5-7 տարի առաջ, և ամեն ինչ արդեն ծանոթ է իրենց, ինչպես համակարգչային խաղի անցած մակարդակները:

5 Այս անվանումները մեջբերված են տեղեկատու անձանց ուղիղ խոսքից:

“Армения это как будто какая то компьютерная игра, которую ты уже видел, в которой ты играл, которую ты уже прошел - все эти рынки, все эти пространства, все это как будто то, что уже ты видел, то, что ты проходил. То, что я даже в своем детстве застала с моей бабушкой, когда мы ходили, разговаривали со всеми, которые предлагали попробовать что то. Как тебе все помогали, как ты мог найти общий язык. Ну, у меня такое ощущение, как будто бы это то, что ты уже видел, то, что ты прошел.”⁶

“Армения для нас в целом ... просто сейчас она очень сильно преобразается и это видно ... но все равно Армения это в основном для нас сейчас то же самое, что Россия лет 10-15 назад.”⁷

“Майр Хайастан”

Այստեղ, տեղեկատու անձանց, խոսքով Հայաստանը նրանց համար հանդես է եկել որպես փրկության ու ապահովության վայր, որը մոր նման խնամել ու հոգ է տարել մորիլիզացիոն ճգնաժամից տրավմա կրած ներգաղթյալներին:

“Я приехал через Грузию, пешком, и честно, мне было стремно, я думал тут тоже будет как в Грузии, но Армения приняла меня с распахнутыми объятиями. Я сразу почувствовал это тепло и безопасность, как в объятиях матери.”⁸

“Мы приехали ночью, заехали в квартиру и не выходили сутками, боялись ... но когда мы уже начали общаться с людьми, поняли какие они разные, и что тут ни как в России, тут даже к полицейским можно подойти и спросить, и они отвечают с улыбкой. Вот у вас говорят Армения – это мать для всех армян, теперь и мы хотим почувствовать себе армянами. Кажется Армения всегда примет, всегда поймет, как настоящая мать.”⁹

Հայաստանը որպես «պահեստային հայրենիք»

Այս դեպքում Հայաստանը հայրենիք է հայ կամ խառնածին հայերի համար, որոնք ՌԴ քաղաքացիներ են և զինապարտ են այդ երկրում: Հայրենիքը արդիական է, ըստ նրանց, երբ առկա է վտանգ, կամ առնվազն ապահովության նժարը ծանրանում է Հայաստանի օգտին:

Այս խմբի ներկայացուցիչների հետ հարցազրույցներն ընթացել են տարբեր կերպ, քանի որ նրանք ընդգծված շեշտել են իրենց հայկական ինքնությունը (չնայած համաձայնության են եկել հարցումն անցկացնել ռուսերենով): Նրանք տարբերում էին իրենց մնացած ռուսաստանցի ներգաղթյալներից՝ հորդորելով չշփոթել իրենց ռուսների հետ:

6 Ներսիսյան Ս.Ա., Տանաջյան Լ.Ա., խորին հարցազրույցի տվյալներ, N 09, Երևան, 2023 թ.:

7 Ներսիսյան Ս.Ա., Տանաջյան Լ.Ա., խորին հարցազրույցի տվյալներ, N 13, Երևան, 2023 թ.:

8 Ներսիսյան Ս.Ա., Տանաջյան Լ.Ա., խորին հարցազրույցի տվյալներ, N 02, Երևան, 2022 թ.:

9 Ներսիսյան Ս.Ա., Տանաջյան Լ.Ա., խորին հարցազրույցի տվյալներ, N 09, Երևան, 2023 թ.:

“Армяне из России считают, и они всегда считали Армению своей дальней брошенной комнатой. В этой комнате никто не живет, брошенная такая комната. Вот они приехали и обустраивают эту комнату, просто потому что им сейчас нужно.”¹⁰

“Армения моя родина, но и Россия тоже. Бывает же две родины? Но Россия лучше как страна для жизни, а Армения теплее, тут мы приезжаем летом, когда жара, к бабушке, на каникулы. Скажем так Россия - это постоянная родина, а Армения она как “запасная” родина. Тут же всегда примут?”¹¹

Եզրակացություններ

Ընդհանուր իրավիճակն ամփոփելու համար կարելի է անել մի քանի պնդում՝ հանգեցնել եզրակացությունների հետևյալ շրջանակին.

- Ռուսաստանցի ներգաղթյալների ճնշող մեծամասնությունը Հայաստանի մասին գրեթե ոչինչ չգիտեր մինչև Հայաստան գալը:
- Ռուսաստանցի ներգաղթյալները Հայաստանում չեն հաստատվելու, քանի որ այն համարում են տարանցիկ երկիր:
- Ռուսաստանցի ներգաղթյալների մեծամասնությունը՝ հատկապես խոշոր քաղաքների ներկայացուցիչները, Հայաստանը համարում են ետգաղութային երկիր, և իրենց դիրքորոշումները տեղավորում են այդ գաղափարաբանության մեջ:
- Նրանք, ովքեր ունեն բարձրագույն կրթություն և երբևէ ճանապարհորդել են Ռուսաստանից դուրս, ավելի լայն պատկերացում ունեն Հայաստանի մասին և հայկական միջավայրը տեսնում են եվրոպական պատկերում՝ համեմատելով այն եվրոպական ճանապարհորդությունների հետ:
- Նրանք, ովքեր օտարերկրյա զբոսաշրջային փորձ չունեն, Հայաստանը ներկայացնում են Կովկասի կերպարով:

Ընդհանուր սոցիալական եզրահանգումներից առանձնահատուկ է սոցիալ-մշակութային մասը, քանի որ ռուսաստանցիները դեռևս ոչ միայն չեն կարողանում իրենց մշակույթը հարմարեցնել տեղի պայմաններին, այլև՝ ինչ-որ կերպ ներառվել տեղական մշակույթի մեջ: Այս հարցում մեծ դեր ունի, թե ինչպես են նրանք ընկալում Հայաստանը և ինչ գաղափարաբանության մեջ են այն դնում: Այդուհանդերձ, Ռուսաստանից տեղափոխված ներգաղթյալները ապահով են զգում հայաստանյան հասարակական միջավայրում՝ շեշտադրելով ընդհանուր անցյալը և ընդհանրությունները սոցիալ-մշակութային հարցերում:

10 Ներսիսյան Ս.Ա., Տանաշյան Լ.Ա., խորին հարցազրույցի տվյալներ, N 07, Երևան, 2022 թ.:

11 Ներսիսյան Ս.Ա., Տանաշյան Լ.Ա., խորին հարցազրույցի տվյալներ, N 04, Երևան, 2022 թ.:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴԻԼԱՆՅԱՆ 2023

Դիլանյան Հ., Ռուս-ուկրաինական պատերազմի ազդեցությունը միգրացիոն հոսքերի վրա՝ թվերով // Տստեսական լրագրողների ակումբ. Ejc.am, 2023. <https://ejc.am/hy/article/9343>

БОДАЛЕВ 1983

Бодалев А.А., Личность и общение: избранные психологические труды, Воронеж, Педагогика, 1983.

MELKUMYAN, MELKONYAN 2023

Melkumyan Y., Melkonyan N., Immigration of Russian citizens to Armenia during the Russian-Ukrainian war that began in 2022: pull-push factors // Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 2023, Vol. 2, No. 1 (4), 137–147.

*Sona A. Nersisyan**Ph.D.*

ARMENIA IN THE PERCEPTIONS OF RUSSIAN IMMIGRANTS

Keywords: perceptions of immigrants, Russian immigrants, adjustment, enumeration, military mobilization.

Only in 2022 and 2023, more immigrants moved to Armenia from Russia than in the previous 10 years taken together. The national composition of those who moved mainly included Russians, Ukrainians, Belarusians, Armenians, etc., who came to Armenia for various purposes, in many cases transferring their financial resources and capital.

Having a common historical past, foreign immigrants from Russia see a certain security in the Armenian social environment. The vast majority of them profess Christianity, and the language is understandable for communication with the locals. From the point of view of adaptation and integration, this group has certain advantages. However, among the immigrants moved from Russia, different groups are distinguished, each of which was studied in a separate phase. Thus, within the framework of the project "The Experience of Social Integration of Foreign Immigrants in Armenia: Situation and Developments - 22YR-6A037", we conducted a research of Russian immigrants in Armenia, particularly with the group of immigrants who moved to Armenia due to military mobilization in Russia.

As a result of migration, a number of questions arise both among immigrants and the host society, but in the framework of this article, we will focus on the immigrants' perceptions of the host country and society.

The results of the research are remarkable in several aspects. first, that the informants either had no idea about Armenia, or had a distorted idea through mediated information, their real perceptions fit into several myths. The latter will be presented in detail in the article. This article uses the results of the research, which were obtained with a representative sample, through semi-structured interviews with 20 Russian immigrants who moved to Armenia between March 2022 and July 2023.

Сона Арайиковна Нерсисян

К.И.Н.

АРМЕНИЯ В ВОСПРИЯТИЯХ РОССИЙСКИХ ИММИГРАНТОВ

Ключевые слова: восприятия иммигрантов, российские иммигранты, адаптация, интеграция, военная мобилизация.

Только в 2022 и 2023 годах в Армению из России переехало больше иммигрантов, чем за предыдущие 10 лет вместе взятые. В национальный состав переехавших в основном входили русские, украинцы, белорусы, армяне и т.д., переехавшие в Армению с различными целями, во многих случаях, взяв с собой финансовые средства, имеющийся капитал. Имея общее историческое прошлое, иностранные иммигранты переехавшие из России, видят определенную безопасность в армянской социальной среде. Подавляющее большинство исповедует христианство, а язык понятен для общения с местными жителями. С точки зрения адаптации и интеграции эта группа имеет определенные преимущества. Однако, среди переехавших из России выделяются разные группы, каждая из которых изучалась на отдельном этапе.

Так, в рамках проекта “Опыт социальной интеграции инонациональных иммигрантов в Армении: ситуация и развитие - 22YR-6A037”, мы провели исследование с российскими иммигрантами в Армении, в частности с группой иммигрантов, переехавших в Армению в связи с военной мобилизацией в России. В результате миграции возникает ряд вопросов, как у иммигрантов, так и у принимающего общества, однако в рамках данной статьи мы сосредоточимся на восприятии иммигрантами относительно принимающей страны и общества. Результаты исследования примечательны в нескольких аспектах. во-первых, информанты либо не имели представления об Армении, либо имели искаженное представление через опосредованную информацию, их реальные восприятия вписываются в несколько мифов.

Последний аспект подробно представлен в статье.

В статье использованы результаты интервью, которые были получены по репрезентативной выборке, посредством полу структурированных интервью с 20 русскими иммигрантами, переехавшими в Армению в период с марта 2022 года по июль 2023 года.

Ներկայացվել է՝ 11.01.2024

գրախոսվել է՝ 18.06.2024

ընդունվել է տպագրության՝ 30.09.2024

ՅԵՂԻՆԱԿՆԵՐ

Աբրահամյան Հասմիկ Արելի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
hasmikabrahamyanihasc@gmail.com

Աթանեսյան Գարիկ Հրահատի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
atanesyangarik@gmail.com

Անգելուշ Լուսինե Միքայելի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի ավագ լաբորանտ

lusineangelush@gmail.com

Ասատրյան Հռիփսիմե Գարիկի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող
hripetnos@mail.ru

Բարսեղյան Սյուզաննա Սոսի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
syuzanna.barseghyan@gmail.com

Գալստյան Միհրան Վարդգեսի

սլավոնական գիրությունների դոկտոր, դոցենտ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող
akoonk@yahoo.com

Գալստյան Նարե Միհրանի

Սոցիոլոգիական գիրությունների թեկնածու

ԱՄՆ Սիրակուզայի համալսարանի Բերթոն Բլատի ինստիտուտի ավագ հետազոտող
nare.galstyan@gmail.com

Խաչատրյան Նելլի Ռաֆիկի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող
nelli.khachaturyan02@gmail.com

Կարապետյան Ռուբեն Սուրենի*պատմական գիտությունների դոկտոր*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող
karapetyan.ruben.s@gmail.com

Հակոբյան Գայանե Լևոնի*պատմական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական
գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
gayik20@gmail.com

Հարությունյան Մարիամ Բագրատի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի ավագ լաբորանտ
mariam-harutyunyan-00@mail.ru

Հովսեփյան Ռոման Աղասու*կենսաբանական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Հնակենսաբանության և էթնոկենսաբանության գ/հ խմբի ղեկավար
roman.hovsepyan@iae.am

Մարկոսյան Սալվինե Հակոբի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Ներսիսյան Սոնա Արայիկի*պատմական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
sona.nersisyan2006@gmail.com

Պողոսյան Սվետլանա Հայկի*պատմական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային
մարդաբանության բաժնի ավագ գիտաշխատող / Հայոց ազգագրության և
ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի փոխտնօրեն
svethnomuseum@yahoo.com

Վարդանյան Մակիչ Աշոտի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական
գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի ավագ
լաբորանտ
makich1639@gmail.com

Տանաջյան Լուսինե Ասատուրի*սլավոնական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
lusine.tanajyan@gmail.com

Տիգրանյան Արմինե Հարությունի

ԵՊՀ Մշակութաբանության ամբիոնի դասախոս
armine.tigranyan@ysu.am

Օհանջանյան Ռուբեն Սամվելի*սլավոնական գիտությունների թեկնածու, դոցենտ*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական
գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
r.ohanjanyan@mail.ru

CONTENTS

I. GLOBALIZATION AND MIGRATION PROCESSES

Mihran Galstyan

To stay or to leave? Exploring the socio-cultural issue of potential emigration from Armenia 8

Lusine Tanajyan

The experience of integration of ethnic Armenian and non-Armenian immigrants in Armenia: comparative aspects 24

Sona Nersisyan

Armenia in the perceptions of Russian immigrants 37

Syuzanna Barseghyan

Main issues of Armenia's repatriation policy in the context of contemporary realities 49

II. IMMIGRANTS AND DISPLACED PEOPLE. THE SOCIAL-CULTURAL LANDSCAPE OF ARMENIA

Gayane Hakobyan

"Aleppo market" as a micro-model of the entrepreneurial activity of Syrian-Armenians 66

Garik Atanesyan

Authenticity discourse and staged heritage in post-Soviet Armenian tourism practices 78

Armine Tigranyan

Restrictions on participation in the cultural life of violently displaced Armenians by Azerbaijan: the example of Artsakh's Hadrut region 89

III. EDUCATION AND GLOBALIZATION

Ruben Ohanjanyan

Some issues of changing trends in professional cultural values in the context of globalization in the Republic of Armenia 114

Lusine Angelush

Language policy of the Republic of Armenia in modern conditions 124

Makich Vardanyan

Globalization discourse in the Armenian mass media: the context of educational problem 139

IV. TRADITIONAL AND MODERN FACTORS IN SOCIAL-CULTURAL TRANSFORMATIONS

Svetlana Poghosyan

Clothing as a socio-psychological indicator of Soviet- and post-Soviet Armenian society 158

Hasmik Abrahamyan

Roman Hovsepyan

The ethno-cultural role of food in the cycle of migration (preliminary study based on the materials recorded in Syunik region, Armenia) 174

V. DIASPORA ISSUES

Ruben Karapetyan

The problem of involving Armenians in the community structures of the Diaspora 190

Nare Galstyan

Perceptions of homeland in the Armenian community of Los Angeles 204

Nelli Khachaturyan

Salvine Markosyan

Mariam Harutyunyan

Ethnoreligious reconversion in the context of globalization (the experience of the Indian, Turkish and Irish diasporas) 218

VI. REPORT

Hripsime Asatryan

Some modern manifestations of children's folklore 238

VII. REVIEW

248

INFORMATION ABOUT AUTHORS 263

СОДЕРЖАНИЕ

I. ГЛОБАЛИЗАЦИЯ И МИГРАЦИОННЫЕ ПРОЦЕССЫ

Мигран Галстян

Остаться или уехать? О социокультурной проблеме возможной новой эмиграции из Армении 8

Лусине Танаджян

Опыт интеграции иммигрантов-армян и иммигрантов других национальностей в Армении: сравнительные аспекты 24

Сона Нерсисян

Армения в восприятиях российских иммигрантов 37

Сюзанна Барсегян

Основные проблемы политики репатриации Армении в контексте современных реалий 49

II. ИММИГРАНТЫ И ПЕРЕМЕЩЕННЫЕ ЛИЦА. СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫЙ ЛАНДШАФТ АРМЕНИИ

Гаяне Акопян

“Рынок Алеппо” как микромодель предпринимательской деятельности сирийских армян 66

Гарик Атанесян

Дискурс аутентичности и постановочное наследие в постсоветской армянской туристической практике 78

Армине Тигранян

Ограничения на участие в культурной жизни насильственно перемещенных армян из Арцаха Азербайджаном: пример Гадрута 89

III. ОБРАЗОВАНИЕ И ГЛОБАЛИЗАЦИЯ

Рубен Оганджян

Некоторые вопросы тенденций изменения профессиональных культурных ценностей в условиях глобализации в Республике Армения 114

Лусине Ангелуш

Языковая политика Республики Армения в современных условиях 124

Макич Варданян

Дискурс глобализации в армянских СМИ: контекст проблемы образования 139

IV. ТРАДИЦИОННОЕ И СОВРЕМЕННОЕ В СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫХ ТРАНСФОРМАЦИЯХ

Светлана Погосян

Одежда как социально-психологический показатель советско- и пост-советско-армянского общества 158

Асмик Абрамян

Роман Овсепян
Этнокультурная роль пищи в круговороте миграции (по материалам Сюникской области) 174

V. ПРОБЛЕМЫ ДΙΑСПОРЫ

Рубен Карапетян

Проблема вовлечения армян в общинные структуры Диаспоры 190

Наре Галстян

Представления о родине в армянской общине Лос-Анджелеса 204

Нелли Хачатурян

Сальвине Маркосян
Мариам Арутюнян
Этнорелигиозная реконверсия в условиях глобализации (на опыте индийской, турецкой и ирландской диаспор) 218

VI. СООБЩЕНИЕ

Рипсима Асатрян

Некоторые современные проявления детского фольклора 238

VII. РЕЦЕНЗИЯ

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ

248
263

ՀԱԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
6

անգլերենի խմբագիրներ՝	Գարիկ Աթանեսյան Արման Խաչատյան
ռուսերենի խմբագիրներ՝	Լիլյա Վարդանյան Լուսինե Անգելուշ
հայերենի խմբագիր՝	Սեդա Քուփեյյան
ձևավորում և էջադրում՝	Արտակ Հարությունյան

